ԿԱՐԾԻՔ

Դալլաքյան Լիանա Արայիկի

(ազգանուն,անուն,հայրանուն)

ՀԱՅ ԿԻՆՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

(ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

(թեմայի անվանումը)

վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը

Լիանա Արայիկի Դալլաքյանի «Հայ կինն ամուսնական ավանդույթների համապատկերում (կրոնագիտական վերլուծություն)» վերտառությամբ ուսումնասիրությունն առանձնանում է իր կարևորությամբ և արդիականությամբ, քանզի կոչված է լուսաբանելու հայ կնոջ դերակատարությունն ու առաքելությունը ընտանիքի համատեքստում՝ հիմք ընդունելով հայոց ազգային ավանդույթների և կանոնաիրավական մտածողության շրջագիծը: Ամուսնական տարատեսակ հարցերի պատմական զարգացման դիտարկումներն ու քննարկումներն արդիական են և պահանջում են այսօրեական գիտական չափորոշիչներին համահունչ լուծումներ ու համակողմանի վերլուծություններ: Այս առումով թեման արդիական է և ներառում է բոլոր հիմնական և կարևոր հարցերի դիտարկումները:

Հայ ընտանիքում կնոջ առաքելության, կոչման և ներընտանեկան ավանդույթների լուսաբանումը, ժամանակի պատմամշակութային առանձնահատկությունների պատմաաղբյուրագիտական դիտարկումները, գիտական ուսումնասիրությունն ու արժևորումը գիտության բազմոլորտ բնագավառների ծիրից, այն է՝ կրոնագիտական, պատմագիտական, մշակութաբանական և իրավագիտական համատեքստում, հետազոտության իրականացման պարտադիր պայմանն է: Ատենախոսության հեղինակը հրապարակային պաշտպանության է ներկայացրել ամուսնական ավանդույթների համապատկերում հայ կնոջ դերի կրոնագիտական վերլուծությունը, առնչակից հիմնախնդիրների նորովի լուսաբանման գիտական ուսումնասիրությունը՝ սկզբնաղբյուրների գործածմամբ, ինչպես նաև հետազոտողների բազմակողմանի վերլուծական ախատանքների հետ զուգորդված: Այսպես՝ աշխատանքի շարադրման համար օգտագործվել են սկզբնաղբյուրներ և նպատակային ու հիմնական

ուսումնասիրությունները:

2. Ատենախոսության կառուցվածքը: Ներածության մեջ պատշաճորեն և գիտական ձևակերպումներով հիմնավորված են թեմայի արդիականությունն ու կարևորությունը, նորույթը, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, գիտագործնական նշանակությունը, սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը, որոնք հստակորեն ներկայացնում են ամբողջ ուսումնասիրությունը: Ատենախոսության կառուցվածքն արտացոլում է հետազոտության գլխավոր նպատակի համապարփակ ընդգրկումը: Համապատասխանաբար օգտագործվել են թեմայի վերաբերյալ և առնչակից ուսումնասիրությունները՝ համապատասխան նյութի դասակարգման և համեմատական եղանակով:

Ատենախոսության հեղինակն ուսումնասիրությունը բաժանել է երկու գլխի, որոնցում համակողմանիորեն ամփոփել է հայ կնոջ բնութագիրը ամուսնական ավանդույթների համապատկերում՝ ըստ էության առաջինը ներկայացնելով ամուսնական ավանդույթների և կանոնական իրավունքի զուգադրական համապատկերը: Սույնով ընդգծվում է ատենախոսության առավել գործնական նշանակությունը, որը հնարավորություն է ընձեռում ուրվագծել առաջնահերթ ընտանեկան ավանդույթների համապարփակ պատկերը ոչ միայն պատմամշակութային առանձնահատկությունների ուսումնասիրման, այլև թեմայի շուրջ գիտահետազոտական աշխատանքների մեկտեղման ու հետազոտման դիտակետից:

Ուսումնասիրության առաջին գլուխը՝ վերնագրված «Հայ կնոջ ամուսնական կարգավիճակը կանոնական իրավունքի համապատկերում», տալիս է պատմաաղբյուրագիտական վերլուծություն՝ եկեղեցաիրավական հուշարձանների ուսումնասիրության շրջանակներում: Սույն գլխում փոխկապակցված և տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև կուռ մեկտեղվածությամբ ներկայացված են ընտանեկան իրավունքի հիմնախնդիրները եկեղեցական իրավունքի համատեքստում: Յուրաքանչյուր հարցի քննարկման շրջանակներում համապատասխանաբար բերվել են վկայություններ եկեղեցաիրավական հուշարձաններից:

Առաջարկություն: Շահեկան կլիներ, եթե ատենախոսության հեղինակն առաջին գլխի վերջում մեկ ամբողջական եզրափակիչ վերլուծական ներկայացներ ընտանիքում կնոջ դերակատարության վերաբերյալ կանոնական իրավունքի բնութագրի և բովանդակային առանձնահատկությունների շուրջ՝ առաջնորդվելով առանձին կանոնների ուսումնասիրությամբ: Վստահ ենք, որ ատենախոսության հեղինակը կարող է ներառել սույն առաջարկությունն իր հետազոտական աշխատանքի հետագա

ընդլայնման և բարելավման ընթացակարգերում:

Ութ ենթագլխից բաղկացած և տրամաբանական հաջորդականությամբ ագուցված երկրորդ գլուխը՝ «Կինը հայ ժողովրդական ամուսնական ավանդույթների համատեքստում» խորագրով, ամփոփ եղանակով տալիս է ընտանիքի և ընտանեկան ավանդույթների զարգացման պատմական ակնարկը, քննարկում է ամուսնության համար չափահասության խնդիրը հայոց սովորութային իրավունքի տեսանկյունից, բռնի ամուսնությունների ժողովրդական դրսևորումները, խնամախոսության և նշանադրության ավանդույթները հայոց մեջ, հարսանեկան ծիսաշարը և հետամուսնական շրջանում հայ կնոջ կարգավիճակի փոփոխություններն ընտանեկան հարաբերություններում: Սույն գլխով հեղինակը համապարփակ ներկայացնում է հայ կնոջ կարգավիճակի փոփոխությունները հայոց սովորութային իրավունքի տեսանկյունից, ամուսնության և ընտանիքի ձևավորման ամբողջական բնութագիրը, ինչպես նաև նրա կերպարի վերաբերյալ տեսակետները: Քննարկվող գլխում քննական վերլուծությամբ ներկայացված հիմնախնդիրներն ու առանցքային բովանդակային խնդիրներն արժեքավոր են գիտական հետազոտության տեսակետից և ունեն գիտագործնական նշանակություն:

Առաջարկություն: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ համապարփակ ներկայացման առաջնահերթությամբ պայմանավորված և ամբողջական համապատկերի լուսաբանմամբ թելադրված՝ երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «2.2. Ամուսնության համար չափահասության խնդիրը հայոց սովորութային իրավունքի տեսանկյունից» վերնագրով ներկայացված նյութը կարիք ունի առավել խորքային հետազոտության: Ատենախոսության հեղինակին առաջարկում ենք հետագայում իր գրքի կամ առանձին այլ ուսումնասիրությունների հրատարակման ընթացքում առավել ամբողջական և ընդլայնված ներկայացնել չափահասության խնդիրը և ժամանակային ու տարածաշրջանային տարանջատված վկայաբերումները:

3. Հետազոտության իրականացումը և արդյունքները

Ուսումնասիրությունը կատարվել է առաջադրված խնդիրների՝ փաստական հենքի վրա իրականացված քննությամբ: Առանցքային նշանակություն ունեցող հիմնախնդիրները քննարկվել և վերլուծվել են գիտական համապատասխան ձևակերպումներով և պատշաճությամբ: Ըստ այդմ՝ ատենախոսության հեղինակը հմտորեն կատարել է իր առջև դրված խնդիրներն ու համապատասխան քննարկումներ ծավալել: «Եզրակացություններ» բաժնում հեղինակն ընդարձակորեն ներկայացրել է իր կատարած հետազոտության արդյունքները:

4. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը

Աշխատանքի շարադրումը և ձևավորումն իրականացվել է առաջադրված պահանջներին համապատասխան և ներկայացվող չափորոշիչների պահպանմամբ:

5. Եզրակացություն (աշխատանքը բավարարում է/չի բավարարում ատենախոսության ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է/արժանի չէ տվյալ մասնագիտությամբ աստիճանի շնորհմանը)

Այսպես՝ հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը միանգամայն համապատասխանում է ատենախոսության ներկայացվող պահանջներին, ներկայացվող նկատառումները միմիայն առաջարկումների և խորհրդատվական բնույթ են կրում, և լիահույս ենք, որ հետագայում իրենց նպաստը կբերեն սույն գիտական ուսումնասիրության բարելավման գործընթացներում: Այդու՝ հեղինակը լիովին արժանի է գիտական աստիճանաշնորհման անվանացանկի Թ.00.05 -Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ) մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման որակավորման աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Նարինե Միրզոյան Զորիկի

(ազգանուն,անուն,

հայրանուն)

պ.գ.թ., դոցենտ

(գիտական աստիճան և

կոչում)

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, Աստվածաբանության և Հայ Եկեղեցու պատմության ամբիոն

(աշխատանքի

վայրը,պաշտոնը)

Ստորագրություն

Պ.գ.թ., դոցենտ Ն. Միրզոյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար Մ.Վ. Հովհաննիսյան

«02» հունիսի 2025 թ.